ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԾԽԱՕԴԱՏԱՐ ՈՒՂԻՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱԿՏԻ ԿԱԶՄՄԱՆ և ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 65

Արտաշատ համայնք

08 <<նոյեմբեր>> 2022թ.

ՀՀ Արարատի մարպետարանի՝ ի դեմս գլխավոր քարտուղար **Ա. Մկրտչյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՎԱՄ-ՄԱՎ>> ՍՊԸ-ի՝(այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն **Հ. Վարդանյանի** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արարատի մարզպետարանի** ծխաօդատար ուղիների տեխնիկական կարգավիճակի ակտի կազմման և ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված ծառայության պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հաշիվ վավերագիր) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.3Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որՊատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությանմատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արարատի մարզպետարան

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ քաղաք, Օգոստոսի 23 փողոց 60

ՀՎՀՀ 04204668
Բանկ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900411099113

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՎԱՄ-ՄԱՎ>> ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Երևան քաղաք, Ավ. Ավետիսյան փող. 80/36

ՀՎՀՀ՝ 08215257
Բանկ՝ <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 220553337902000

Տնօրեն՝ Հ. Վարդանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1
08 «նոյեմբեր » 2022թ. կնքված
N65 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
-	-	ՀՀ Արարատի մարզպետարանի ծխաօդատար ուղիների տեխնիկական կարգավիճակի ակտի կազմման և ծառայության մատուցման պայմանագիր	դրամ	40000	1	ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ քաղաք, Օգոստոսի 23 փողոց 60 /շենք/	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 08.11.2023թ.

ՀՀ Արարատի մարզպետարան

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ քաղաք, Օգոստոսի 23 փողոց 60

ՀՎՀՀ 04204668
Բանկ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900411099113

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՎԱՄ-ՄԱՎ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Երևան քաղաք, Ավ. Ավետիսյան փող. 80/36

ՀՎՀՀ 08215257
Բանկ՝ <<ԱԿԲԱ բանկ>> ԲԲԸ
Հ/Հ 220553337902000
Տնօրեն՝ Հ. Վարդանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
08 «նոյեմբեր » 2022թ. կնքված
N65 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել *2022թ-ին*՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
-	-	ՀՀ Արարատի մարզպետարանի ծխաօդատար ուղիների տեխնիկական կարգավիճակի ակտի կազմման և ծառայության մատուցման պայմանագիր	...	...	...	...	...	...	...	...	---	----	40000	-----	40000

ՀՀ Արարատի մարզպետարան

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ քաղաք, Օգոստոսի 23 փողոց 60

ՀՎՀՀ 04204668
Բանկ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900411099113

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՎԱՄ-ՄԱՎ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Երևան քաղաք, Ավ. Ավետիսյան փող. 80/36

ՀՎՀՀ 08215257
Բանկ՝ <<ԱԿԲԱ բանկ>> ԲԲԸ
Հ/Հ 220553337902000
Տնօրեն՝ Հ. Վարդանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
08 «նոյեմբեր » 2022թ. կնքված
N65 պայմանագրի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՎՀՀ 08215257
Բանկ՝ <<ԱԿԲԱ բանկ>> ԲԲԸ
Հ/Հ 220553337902000
Տնօրեն՝ Հ. Վարդանյան

ՀՀ Արարատի մարզպետարան

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ քաղաք, Օգոստոսի 23 փողոց 60

ՀՎՀՀ 04204668
Բանկ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900411099113

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

08 «նոյեմբեր » 2022թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի ծխաօդատար ուղիների տեխնիկական կարգավիճակի ակտի կազման և ծառայության մատուցում

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08 «նոյեմբեր » 2022թ.

Պայմանագրի համարը՝ *N65*

Պայմանագրիշրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	ՀՀ Արարատի մարզպետարան	Ծխաօդատար ուղիների տեխնիկական կարգավի-ճակի ակտի կազմման և ծառայության մատուցման պայմանագիր	08.11.2022թ.-ից 08.11.2023թ.	40000	08.11.2022թ.-ից 08.11.2023թ.	40000	40000	նոյեմբեր 2022թ.

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց
<<ՎԱՄ-ՄԱՎ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Հ. Վարդանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Ծառայությունն ընդունեց
ՀՀ Արարատի մարզպետարան
Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3.1
08 «նոյեմբեր » 2022թ. կնքված
N65 պայմանագրի

ԱԿՏ N 1
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ ՀՀ Արարատի մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՎԱՄ-ՄԱՎ»ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2022թՆոյեմբերի 8-ին կնքված N65 պայմանագրի շրջանակներում Կատարողը 2022թ. նոյեմբերին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
ՀՀ Արարատի մարզպետարանի ծխաօդատար ուղիների տեխնիկական կարգավիճակի ակտի կազմման և ծառայության մատուցման պայմանագիր	հատ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
<<ՎԱՄ-ՄԱՎ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Հ. Վարդանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Ընդունեց
ՀՀ Արարատի մարզպետարան
Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ